



«Ներդաշնակ հասարակություն»  
Սոցիալական աշխատողների ասոցիացիա, ՀԿ  
Գործունեության հաշվետվություն  
2008-2009թթ

Հարգելի՛ գործընկերներ,

պատիվ ունեմ Ձեր ուշադրությանը ներկայացնելու 2008-2009 թվականների Վարչության կողմից իրականացված հետևյալ աշխատանքները:

1. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն առաջարկել է Ասոցիացիային քննարկելու ՀՀ-ում երեխաների պաշտպանության մարզային ցանցեր ստեղծելու հարցը: Սա կարող է հեռանկարային հնարավորություններ ստեղծել մարզերի մասնագետների համար, քանի որ հիմնականում սոցիալական աշխատանքի մասնագիտացված ծառայություն մատուցող կառույցները կենտրոնացված են մայրաքաղաքում և դժվար է կապ պահպանել մարզերի մասնագետների հետ: Մարզային ցանցերի ստեղծումը հնարավորություն կտա ընդլայնելու մասնագետների աջակցություն տրամադրելու գործունեության շրջանակը:
2. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից նաև պատվերի է ուղղվել Ասոցիացիային՝ իրականացնելու հաստատությունների արագ գնահատում: Վարչության անդամները կարևոր են համարում բարեփոխումների գործընթացում մասնակից լինելը, իսկ հաստատությունների գնահատումը՝ բարեփոխումների մի մասն է կազմում, ուստիև շատ ողջունելի է հետազոտության իրականացումը՝ ելնելով անաչառ որևէ հեռակա շահ չհետապնդող մոտեցման տեսանկյունից:
3. Ինչպես ավանդակաբար կազմակերպվում է, այս տարիների ընթացքում ևս Ասոցիացիան նշեց մասնագիտական տոները: Միջոցառումների հիմնական շեշտը դրված էր մասնագիտության զարգացման, սոցիալական ոլորտի



բարեփոխումների հարցերի վրա: Միջոցառումներից մեկում հատուկ շեշտադրվեց նաև մանկական թրաֆիկինգի վերաբերյալ ՀՀ բնակչության կողմից իրազեկվածության մակարդակի ուսումնասիրություն կատարելու անհրաժեշտությունը: Միջոցառումներից մյուսը նվիրված էր Ասոցիացիայի գործունեության հնգամյակին, որի առնչությամբ ներկայացվեց Ասոցիացիայի ստեղծման պատմությունը, հինգ տարիների գործունեությունը, ինչպես նաև առաջիկա գործողություններն ու ծրագրերը: Վարչության անդամները կարևորում են հետազոտական ծրագրեր իրականացնելու կարևորությունը՝ մասնագիտական վիճակագրությունը, արդի հիմնախնդիրների ուսումնասիրությունն ու այդ ոլորտում մասնագիտության զարգացումը, ուստի և նպատակահարմար են համարում ծրագրի իրականացումը:

4. Վարչության կողմից քննարկվել է նաև 2010-2013 թթ ինտեգրված սոցիալական ծառայությունների մոդելավորման հարցը: Սա այն հնարավորությունն է, ինչի մասին խոսվել է Ասոցիացիայի ստեղծման պահից, քանի որ նրա նպատակներից մեկը նոր սոցիալական տեխնոլոգիաների մշակումն ու նոր ծառայությունների մոդելավորումն է, իսկ ինտեգրված սոցիալական ծառայությունների մոդելավերումը թույլ կտա մեկընդմիջտ աստիճանակարգել սոցիալական ծառայություններ մատուցող մասնագետներին, առանձնացնել նրանց գործառույթները և ներկայացնել պետական մարմինների հաստատմանը:

Շնորհակալություն

«Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիայի  
նախագահ

Միրա Անտոնյան